



Եվրոպական պայմանագրերի շարք – Հ- 165

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱ**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Լիսաբոն, 11 ապրիլի, 1997թ.

Սույն Կոնվենցիայի Կողմերը,

Գիտակցելով այն փաստը, որ կրթության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքներից մեկը, և որ բարձրագույն կրթությունը, որը կարևոր նշանակություն ունի գիտելիքների ձեռքբերման ու կատարելագործման գործում, բացառիկ մշակութային և գիտական հարստություն է ինչպես անհատների, այնպես էլ հասարակության համար,

Գտնելով, որ բարձրագույն կրթությունը պետք է կենսական դեր խաղա խաղադրության, փոխըմբռնման ու հանդուրժողականության խթանման գործում և նպաստի ժողովուրդների ու պետությունների միջև փոխադարձ վստահության ձևավորմանը,

Գտնելով, որ Եվրոպական տարածաշրջանում առկա կրթական համակարգերի մեծ բազմազանությունն արտահայտում է նրա մշակութային, սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, կրոնական և տնտեսական բազմազանությունը՝ մի բացառիկ հարստություն, որի նկատմամբ պետք է դրսևորվի լիակատար հարգանք,

Ցանկանալով տարածաշրջանի բոլոր մարդկանց հնարավորություն ընձեռել բազմազանության այս հարստությունից լիարժեքորեն օգտվելու համար՝ մեծացնելով մյուս Կողմերի կրթական ռեսուրսների մատչելիությունը յուրաքանչյուր պետության բնակչի և յուրաքանչյուր Կողմի ուսումնական հաստատությունների ուսանողների համար, մասնավորապես՝ թույլ տալով նրանց շարունակելու իրենց կրթությունը կամ ավարտելու դասընթացները այդ մյուս Կողմերի բարձրագույն ուսումնական հաստատություններում,

Գտնելով, որ Եվրոպական տարածաշրջանի մեկ այլ երկրում ստացած դասընթացների, վկայագրերի, դիպլոմների և գիտական աստիճանների ճանաչումը կարևոր միջոց է Կողմերի միջև գիտական շարժունակությունը խթանելու համար,

Մեծ կարևորություն տալով ինստիտուցիոնալ ինքնավարության սկզբունքին և գիտակցելով այս սկզբունքը պահպանելու և պաշտպանելու կարիքը,

Համոզված լինելով, որ որակավորումների արդարացի ճանաչումը իրենից ներկայացնում է կրթության իրավունքի կարևորագույն տարրերից մեկը և հասարակության պատասխանատվությունն է,

Հաշվի առնելով Եվրոպայի Խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաները, որոնք կարգավորում են գիտական ճանաչմանը Եվրոպայում՝

Համալսարաններ ընդունվելու հնարավորություն ընձեռող դիպլոմների համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան (1953, Եպշ, հ-15) և դրան կից Արձանագրությունը (1964, Եպշ, հ-49),

Համալսարանական ուսումնառության ժամանակաշրջանների համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան (1956, Եպշ, հ-21),

Համալսարանական որակավորումների գիտական ճանաչման մասին Եվրոպական կոնվենցիան (1959, Եպշ, հ-32),

Եվրոպական տարածաշրջանին պատկանող պետություններում բարձրագույն կրթությանն առնչվող դասընթացների, դիպլոմների և գիտական աստիճանների ճանաչման մասին Կոնվենցիան (1979),

Համալսարանական կրթության ժամանակաշրջանների ընդհանուր համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան (1990, Եպշ, հ-138),

Հաշվի առնելով նաև Միջերկրական տարածաշրջանին սահմանակցող արաբական և եվրոպական պետություններում բարձրագույն կրթությանն առնչվող դասընթացների, դիպլոմների և գիտական աստիճանների ճանաչման մասին միջազգային Կոնվենցիան (1976), որն ընդունվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում և մասնակիորեն կարգավորում է Եվրոպայում գիտական ճանաչումը,

Քաջատեղյակ լինելով, որ սույն Կոնվենցիան պետք է դիտարկվի նաև աշխարհի այլ տարածաշրջաններն ընդգրկող ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաների և Միջազգային հանձնարարականի համատեքստում, և որ անհրաժեշտ է կատարելագործել այս տարածաշրջանների միջև տեղեկատվության փոխանակումը,

Գիտակցելով, որ այս կոնվենցիաների ընդունումից ի վեր Եվրոպական տարածաշրջանի բարձրագույն կրթության բնագավառում տեղի են ունեցել տարբեր տրամաչափի փոփոխություններ, որոնք հանգեցրել են բարձրագույն կրթության ազգային համակարգերի միջև և դրանց ներսում բազմազանության նշանակալի ավելացմանը, ինչպես նաև այս զարգացումներն արտացոլելու նպատակով իրավական գործիքները և իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնելու անհրաժեշտությունը,

Գիտակցելով Եվրոպական տարածաշրջանում ճանաչման գործնական հիմնախնդիրներին ընդհանուր լուծումներ գտնելու անհրաժեշտությունը,

Գիտակցելով ճանաչման գոյություն ունեցող պրակտիկայի բարելավման, այն ավելի թափանցիկ դարձնելու և Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության ներկայիս վիճակին հարմարեցնելու անհրաժեշտությունը,

Համոզված լինելով Եվրոպայի Խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միացյալ հովանու ներքո մշակված և ընդունված Կոնվենցիայի դրական նշանակության մեջ, որը դաշտ է ստեղծում Եվրոպական տարածաշրջանում ճանաչման պրակտիկայի հետագա զարգացման համար,

Գիտակցելով իրականացման մշտապես գործող մեխանիզմներ նախատեսելու կարևորությունը՝ սույն Կոնվենցիայի սկզբունքների և դրույթների կիրառումն ապահովելու նպատակով

համաձայնեցին հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ I. Սահմանումներ

Հոդված I

Սույն Կոնվենցիայի նպատակների համար ստորև բերված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունները՝

Մատչելիություն (բարձրագույն կրթության) համապատասխան որակավորում ունեցող թեկնածուների՝ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար դիմելու և ընդունելության քննությանը մասնակցելու իրավունք.

Ընդունելություն (բարձրագույն կրթության հաստատություն և ծրագիր) - գործողություն, որը կատարվում է համապատասխան որակավորում ունեցող թեկնածուի կողմից տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում և/կամ տվյալ ծրագրով սովորելու նպատակով կամ համակարգ, որը նշված թեկնածուներին տալիս է նման հնարավորություն

Գնահատում (հաստատությունների կամ ծրագրերի) - բարձրագույն ուսումնական հաստատության կամ ծրագրերի կրթական որակը որոշող գործընթաց.

Գնահատում (անհատական որակավորման) – լիազորված մարմնի կողմից անհատի՝ արտասահմանում ձեռք բերած **որակավորումների** գրավոր ճանաչում կամ գնահատական.

Ճանաչման լիազորված մարմին - մարմին, որը պաշտոնապես լիազորված է պարտադիր կատարման ենթակա որոշումներ կայացնել արտասահմանում ձեռք բերած **որակավորումների** ճանաչման վերաբերյալ.

Բարձրագույն կրթություն - հետմիջնակարգ կրթական մակարդակի բոլոր տեսակի ուսումնական դասընթացներ կամ ուսումնական դասընթացների շարք, կամ վերապատրաստում կամ հետազոտական նպատակով վերապատրաստում, որոնք Կողմի համապատասխան մարմինների կողմից ճանաչվում են որպես իր բարձրագույն կրթական համակարգին պատկանող.

Բարձրագույն ուսումնական հաստատություն - հաստատություն, որը տալիս է բարձրագույն կրթություն և Կողմի լիազորված մարմնի կողմից ճանաչվում է որպես իր բարձրագույն կրթական համակարգի հաստատություն.

Բարձրագույն ուսումնական ծրագիր - ուսումնական դասընթաց, որը Կողմի լիազորված մարմնի կողմից ճանաչվում է որպես իր բարձրագույն կրթական համակարգին պատկանող, և որի լրացնելը ուսանողին տալիս է բարձրագույն կրթության որակավորում.

Ուսման ժամանակաշրջան - բարձրագույն կրթության ծրագրի ցանկացած բաղադրատարր, որը գնահատվել ու փաստաթղթավորվել է, և որը թեև ինքնին ուսումնական ամբողջական ծրագիր չէ, սակայն իրենից ներկայացնում է գիտելիքների կամ հմտությունների զգալի ձեռքբերում.

Որակավորում

Ա. Բարձրագույն կրթության որակավորում – լիազորված մարմնի շնորհած ցանկացած գիտական աստիճան, դիպլոմ կամ այլ վկայական, որը հավաստում է բարձրագույն կրթության ծրագիրը հաջողությամբ լրացնելու փաստը.

Բ. Բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն ընձեռող որակավորում - Լիազորված մարմնի կողմից տրված ցանկացած դիպլոմ կամ այլ վկայական, որն հավաստում է կրթական ծրագիրը հաջողությամբ լրացնելու փաստը և որակավորում ստացած անձին իրավունք է ընձեռում բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության քննությանը մասնակցելու իրավունք համար (տես՝ «մատչելիության» բնորոշումը).

Ճանաչում – լիազորված մարմնի կողմից արտասահմանում ստացած կրթական որակավորման մակարդակի պաշտոնական հաստատում ուսումնական և/կամ աշխատանքային գործունեության մատչելիության ապահովման նպատակով.

Պահանջներ

Ա. ընդհանուր պահանջներ - պայմաններ, որոնք պետք է բավարարվեն ցանկացած դեպքում՝ բարձրագույն կրթության կամ դրա որոշակի մակարդակի հնարավորություն ունենալու համար կամ բարձրագույն կրթության էրևել որակավորում ստանալու համար.

Բ. հատուկ պահանջներ - պայմաններ, որոնք պետք է կատարվեն ի լրումն ընդհանուր պայմանների՝ բարձրագույն կրթության որևէ առանձին ծրագրում ընդունելության կամ հետազոտության որևէ առանձին բնագավառում բարձրագույն կրթության հատուկ որակավորում ստանալու նպատակով:

ԳԼՈՒԽ I I

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված II. 1

1. Եթե ճանաչման հարցերով որոշումներ ընդունելու իրավասությամբ օժտված են որևէ Կողմի կենտրոնական մարմինները, ապա այդ Կողմն անմիջապես պարտավորված է սույն Կոնվենցիայի դրույթներով և պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի այդ դրույթների կիրառումը իր տարածքում ապահովելու համար:

Եթե ճանաչման հարցերով որոշումներ ընդունելու իրավասությամբ օժտված են Կողմի վարչատարածքային միավորները, ապա այդ Կողմը պետք է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս կամ հետագայում ցանկացած պահի, ավանդապահներից որևէ մեկին ներկայացնի իր սահմանադրական կարգավորման կամ կառուցվածքի համառոտ հաշվետվությունը: Այդպիսի դեպքերում համապատասխան Կողմերի վարչատարածքային միավորների իրավասու մարմինները, որոնք լիազորված են որպես այդպիսիք հանդես գալուն, պետք անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն սույն Կոնվենցիայի դրույթների կիրառումը

իրենց տարածքներում ապահովելու համար:

2. Եթե ճանաչման հարցերով որոշումներ ընդունելու իրավասությամբ օժտված են առանձին բարձրագույն ուսումնական կամ այլ հաստատություններ, ապա յուրաքանչյուր Կողմ, իր սահմանադրական կարգավորմանը կամ կառուցվածքին համապատասխան, պետք է սույն Կոնվենցիայի տեքստը փոխանցի այդ ուսումնական կամ այլ հաստատություններին և պետք է ձեռնարկի հնարավոր բոլոր քայլերը՝ նրանց կողմից սույն Կոնվենցիայի դրույթների նպաստավոր քննարկումը և կիրառումը քաջալերելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները պետք է կիրառվեն, *mutatis mutandis*, սույն Կոնվենցիայի հոջորդող հոդվածների ներքո Կողմերի ստանձնած պարտավորությունների նկատմամբ:

Հոդված II. 2

Ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրն ի պահ հանձնելիս կամ հետագայում ցանկացած պահի, յուրաքանչյուր պետություն, Վատիկանը կամ Եվրոպական համայնքը սույն Կոնվենցիայի ավանդապահներից մեկին տեղեկացնում են այն մարմինների մասին, որոնք լիազորված են ճանաչման հարցերով տարբեր տեսակի որոշումներ կայացնելու:

Հոդված II. 3

Սույն Կոնվենցիայում պարունակվող ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես Կողմերից որևէ մեկում տրված որակավորումների ճանաչման վերաբերյալ որևէ ավելի նպաստավոր այնպիսի դրույթի սահմանափակում, որը պարունակվում է կամ բխում որևէ գործող կամ ապագայում կնքվելիք պայմանագրից, որի անդամ է հանդիսանում կամ որի անդամ կարող է դառնալ սույն Կոնվենցիայի որևէ Կողմ:

ԳԼՈՒԽ III

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Հոդված III. 1

1. Կողմերից որևէ մեկում տրված որակավորումներ ունեցողները պետք է, համապատասխան մարմնին դիմելու միջոցով, ունենան այդ որակավորումների գնահատման համարժեք հնարավորություն:

2. Այս առնչությամբ ոչ մի խտրականություն չպետք է դրսևորվի՝ կապված դիմողի սեռի, ռասայի, մաշկի գույնի, հաշմանդամության, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքի, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի հետ կամ ցանկացած այլ՝ ճանաչումն հայցվող որակավորման էության կապ չունեցող հանգամանքների հետ: Այս իրավունքն ապահովելու նպատակով յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի որակավորումների ճանաչման մասին դիմումը գնահատվի բացառապես ձեռք բերված գիտելիքների և հմտությունների հիման վրա:

Հոդված III. 2

Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որպեսզի որակավորումների գնահատման և ճանաչման ընթացակարգերն ու չափանիշները լինեն թափանցիկ, հետևողական և վստահելի:

Հոդված III. 3

1. Ճանաչման վերաբերյալ որոշումներն ընդունվում են այն որակավորումների մասին համապատասխան տեղեկատվության հիման վրա, որոնց ճանաչումը հայցվում է:

2. Համապատասխան տեղեկություն տրամադրելու պատասխանատվությունն առաջին հերթին ընկնում է դիմողի վրա, որն այդ տեղեկատվությունը պետք է տրամադրի բարեխիղճ կերպով:

3. Չնայած դիմողի պատասխանատվությանը՝ խնդրո առարկա որակավորումներ սոված հաստատությունները, դիմողի խնդրանքով և ողջամիտ սահմաններում, պետք է վերաբերելի տեղեկություն տրամադրեն որակավորում ունեցողին, այն հաստատությանը կամ այն երկրի իրավասու մարմիններին, որտեղ հայցվում է ճանաչումը:

4. Կողմերը պետք է ըստ անհրաժեշտության կարգադրեն կամ խրախուսեն իրենց կրթական համակարգերին պատկանող բոլոր ուսումնական հաստատությունների կողմից՝ տեղեկություն տրամադրելու համար ներկայացված բոլոր ողջամիտ խնդրանքների բավարարումը նշված հաստատություններում ձեռք բերված որակավորումները գնահատելու նպատակով:

5. Դիմումի՝ համապատասխան պահանջներին չբավարարելու փաստը ի ցույց դնելու պարտականությունն ընկած է գնահատումը իրականացնող մարմնի վրա:

Հոդված III. 4

Որակավորումների ճանաչումը հեշտացնելու նպատակով յուրաքանչյուր Կողմ

ապահովում է իր կրթական համակարգին վերաբերող համապատասխան և հստակ տեղեկության տրամադրումը:

Հոդված III. 5

Ճանաչման վերաբերյալ որոշումները ընդունվում են ճանաչման հարցերով լիազորված մարմինների կողմից նախօրոք նշված ողջամիտ ժամկետում, որը հաշվարկվում է դիմումի քննարկման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները տրամադրելու պահից: Ճանաչման խնդրանքը չբավարարվելու դեպքում պետք է ներկայացվեն մերժման պատճառները, և տեղեկություն տրվի այն մասին, թե ինչ հնարավոր միջոցներ կարող է ձեռնարկել դիմողը՝ հետագայում ճանաչումը ձեռք բերելու նպատակով: Ճանաչման խնդրանքը չբավարարվելու դեպքում կամ որևէ որոշում չկայացվելու դեպքում, դիմողը կարող է բողոք ներկայացնել ողջամիտ ժամկետներում:

ԳԼՈՒԽ I V

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ

Հոդված IV. 1

Յուրաքանչյուր Կողմ իր բարձրագույն կրթական համակարգին պատկանող ծրագրերով ընդունվելու նպատակով ճանաչում է մյուս Կողմերի տված որակավորումները, որոնք բավարարում են այդ Կողմերում բարձրագույն կրթության ընդունելության ընդհանուր պահանջներին, եթե այն Կողմի, որտեղ որակավորումը ձեռք է բերվել, և այն Կողմի, որտեղ որակավորումը պետք է ճանաչվի, ընդհանուր պահանջների միջև էական տարբերություն չի կարող ի ցույց դրվել:

Հոդված IV. 2

Որպես այլընտրանք՝ բավարար է, որպեսզի մի Կողմը մյուս Կողմերից որևէ մեկում տրված որակավորում ունեցող անձին, վերջինիս խնդրանքով, հնարավորություն տա ձեռք բերելու այդ որակավորման գնահատականը, և այս դեպքում կիրառվում են, *mutatis mutandis*, IV.1 հոդվածի դրույթները:

Հոդված IV. 3

Այն դեպքերում, երբ որակավորումը հնարավորություն է տալիս ընդունվելու բարձրագույն կրթության միայն հատուկ տիպի հաստատություններ կամ հատուկ ծրագրեր՝ այն Կողմում, որտեղ որակավորումը ձեռք է բերվել, յուրաքանչյուր այլ

Կողմ այդպիսի որակավորումներ ունեցող անձանց հնարավորություն է ընձեռում մասնակցելու իր բարձրագույն կրթական համակարգին պատկանող հաստատությունների նմանատիպ հատուկ ծրագրերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այն Կողմի, որտեղ ձեռք է բերվել որակավորումը, և այն Կողմի, որտեղ որակավորումը պետք է ճանաչվի, ընդունելության պահանջների միջև էական տարբերություն չի կարող ի ցույց դրվել:

Հոդված IV. 4

Այն դեպքերում, երբ բարձրագույն կրթական առանձին ծրագրերին մասնակցելը, ի լրումն ընդունելության ընդհանուր պահանջների, պայմանավորված է հատուկ պահանջների կատարումից, համապատասխան Կողմի լիազոր մարմինները կարող են լրացուցիչ պահանջներ ներկայացնել հավասարապես այլ Կողմերում ձեռք բերած որակավորում ունեցող անձանց նկատմամբ կամ գնահատել, թե արդյոք այլ Կողմերում որակավորում ստացած դիմորդները բավարարում են հավասարազոր պահանջներին:

Հոդված IV. 5

Այն դեպքերում, երբ այն Կողմում, որտեղ դրանք ձեռք են բերվել, միջնակարգ դպրոցի ավարտական վկայականները բարձրագույն կրթության հնարավորություն են տալիս միայն լրացուցիչ որակավորման քննությունների համակցությամբ՝ որպես ընդունելության հնարավորության նախապայման, մյուս Կողմերը կարող են ընդունելության հնարավորության առկայությունը պայմանավորել նույն պահանջներով կամ առաջարկել այլընտրանք՝ բավարարելու այդպիսի լրացուցիչ պահանջներն իրենց կրթական համակարգի սահմաններում: Ցանկացած պետություն, Վատիկանը կամ Եվրոպական համայնքը կարող են ստորագրելիս կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս կամ հետագայում ցանկացած պահի, ավանդապահներից որևէ մեկին ծանուցել, որ օգտվում են սույն հոդվածի դրույթներից՝ նշելով այն Կողմերին, որոնց նկատմամբ իրենք մտադիր են կիրառել սույն հոդվածը, ինչպես նաև դրա պատճառները:

Հոդված IV. 6

Առանց IV.1, IV.2, IV.3, IV.4 և IV.5 հոդվածների դրույթների գործողությունը սահմանափակելու՝ տվյալ բարձրագույն ուսումնական հաստատություն կամ հաստատության տվյալ ծրագրով ընդունելությունը կարող է լինել սահմանափակ կամ ընտրովի: Այն դեպքերում, երբ բարձրագույն ուսումնական հաստատություն և/կամ հաստատության ծրագրով ընդունելությունն ընտրովի է, ընդունելության ընթացակարգը պետք է կազմակերպվի այն հաշվով, որպեսզի երաշխավորվի արտասահմանյան որակավորումների գնահատման իրականացումը III-րդ գլխում սահմանված արդարության և խտրականության բացառման սկզբունքների հիման վրա:

Հոդված IV. 7

Առանց IV.1, IV.2, IV.3, IV.4 և IV.5 հոդվածների դրույթների գործողությունը սահմանափակելու՝ տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունը ընդունելությունը կարող է պայմանավորվել դիմորդի կողմից տվյալ հաստատության դասավանդման լեզվի կամ լեզուների կամ այլ նշված լեզուների բավարար տիրապետման ցուցադրությամբ:

Հոդված IV. 8

Այն Կողմերում, որտեղ բարձրագույն ուսումնական հաստատությունը ընդունվելու հնարավորություն կարելի է ստանալ ոչ ավանդական որակավորումների հիման վրա, ապա այլ Կողմերում ձեռք բերված նմանատիպ որակավորումները պետք է գնահատվեն նույն ձևով, ինչպես ոչ ավանդական որակավորումները, որոնք ձեռք են բերվել այն Կողմում, որտեղ հայցվում է ճանաչումը:

Հոդված IV. 9

Բարձրագույն կրթական ծրագրերով ընդունելություն կատարելու նպատակով յուրաքանչյուր Կողմ կարող է իր տարածքում գործող օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից տրված որակավորումների ճանաչումը կախվածության մեջ դնել ազգային օրենսդրությամբ կամ այդպիսի հաստատությունների ծագման Կողմի հետ կնքված հատուկ համաձայնագրերով նախատեսված հատուկ պահանջներից:

ԳԼՈՒԽ V

ՈՒՍՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ

Հոդված V. 1

Յուրաքանչյուր Կողմ ճանաչում է մյուս Կողմի բարձրագույն ուսումնական ծրագրի շրջանակներում իրականացված ուսման ժամանակաշրջանները: Այս ճանաչումը ընդգրկում է ուսման այն ժամանակաշրջանները, որոնք ուղղված են բարձրագույն ուսումնական ծրագրերը լրացնելուն այն Կողմում, որտեղ հայցվում է ճանաչումը, եթե չի կարող էական տարբերություն ի ցույց դրվել մյուս Կողմում անցկացված ուսման ժամանակաշրջանների և ճանաչումը հայցվող Կողմում բարձրագույն կրթության ծրագրի այդ հատվածի միջև:

Հոդված V. 2

Որպես այլընտրանք՝ բավարար է, որպեսզի մի Կողմը մյուս Կողմում բարձրագույն ուսումնական ծրագրի շրջանակներում ուսման որոշակի ժամանակաշրջան ավարտած անձին, վերջինիս խնդրանքով, հնարավորություն տա ձեռք բերելու այդ ուսման ժամանակաշրջանի գնահատականը, և այս դեպքում կիրառվում են, *mutatis mutandis*, V.1 հոդվածի դրույթները:

Հոդված V. 3

Մասնավորապես, յուրաքանչյուր Կողմ պետք է հեշտացնի ուսման ժամանակաշրջանների ճանաչումը, եթե՝

ա. առկա է նախնական համաձայնություն մի կողմից՝ բարձրագույն ուսումնական հաստատության կամ ուսման տվյալ ժամանակաշրջանի համար պատասխանատու լիազոր այլ մարմնի և, մյուս կողմից, բարձրագույն ուսումնական հաստատության կամ հայցվող ճանաչման համար պատասխանատու՝ լիազոր մարմնի միջև, և

բ. բարձրագույն ուսումնական հաստատությունը, որտեղ անցկացվել է ուսման տվյալ ժամանակաշրջանը, տվել է վկայական կամ ստուգարքների և քննությունների արդյունքների քաղվածք, որը հաստատում է, որ ուսանողը հաջողությամբ լրացրել է ուսման նշված ժամանակաշրջանին ներկայացվող անհրաժեշտ պահանջները:

ԳԼՈՒԽ V I

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ

Հոդված VI. 1

Այնքանով, որքանով ճանաչման մասին որոշումը հիմնված է բարձրագույն կրթության որակավորմամբ հավաստվող գիտելիքների և հմտությունների վրա, յուրաքանչյուր Կողմ ճանաչում է մյուս Կողմում շնորհված բարձրագույն կրթության որակավորումները, եթե այն որակավորման, որի համար հայցվում է ճանաչումը, և ճանաչումն հայցվող Կողմի համապատասխան որակավորման միջև էական տարբերություն ի ցույց չի դրվում:

Հոդված VI. 2

Որպես այլընտրանք՝ բավարար է, որպեսզի մի Կողմը Կողմերից որևէ մեկում բարձրագույն կրթության որակավորում ստացած անձին, վերջինիս խնդրանքով, հնարավորություն տա ձեռք բերելու այդ որակավորման գնահատականը, և այս դեպքում կիրառվում են, *mutatis mutandis*, VI.1 հոդվածի դրույթները:

Հոդված VI. 3

Մի Կողմում ձեռք բերված բարձրագույն կրթության որակավորման՝ մյուս Կողմի կողմից ճանաչումը կունենա հետևյալ հետևանքը կամ հետևանքները՝

ա. հետագա բարձրագույն կրթության դասընթացներ ստանալու հնարավորություն, ներառյալ՝ համապատասխան քննությունները և/կամ դոկտորական աստիճան ստանալու համար նախապատրաստումը նույն պայմաններով, որոնք կիրառվում են այն ճանաչումն հայցվող Կողմի որակավորում ունեցողների համար,

բ. գիտական կոչման օգտագործում՝ ճանաչումն հայցվող Կողմի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համաձայն կամ նրա իրավագործության ներքո:

Բացի այդ, ճանաչումը կարող է հեշտացնել աշխատանքի շուկայից օգտվելու հնարավորությունը՝ ճանաչումն հայցվող Կողմի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի համաձայն կամ նրա իրավագործության ներքո:

Հոդված VI. 4

Մի Կողմում տրված բարձրագույն կրթության որակավորման գնահատումը մյուս Կողմում կարող է կատարվել հետևյալ ձևերով՝

ա. երաշխավորություն՝ զբաղվածության ընդհանուր նպատակների համար,

բ. երաշխավորություն՝ ուղղված ուսումնական հաստատությանը՝ վերջինիս ծրագրերում ընդգրկվելու համար,

գ. երաշխավորություն՝ ուղղված ճանաչման որևէ այլ լիազորված մարմնի: ճանաչման հարցերով այլ իրավասու մարմնին:

Հոդված VI. 5

Յուրաքանչյուր Կողմ կարող է իր տարածքում գործող օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից տրված որակավորումների ճանաչումը կախվածության մեջ դնել ազգային օրենսդրությամբ կամ այդպիսի հաստատությունների ծագման Կողմի հետ կնքված հատուկ համաձայնագրերով նախատեսված հատուկ պահանջներից:

Գ Լ Ո Ւ Խ V I I

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Հոդված VII

Յուրաքանչյուր Կողմ, իր կրթական համակարգի շրջանակներում և իր սահմանադրական, իրավական, կանոնակարգային դրույթների համաձայն, պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր և ողջամիտ քայլերն այնպիսի ընթացակարգեր մշակելու համար, որոնք ուղղված կլինեն արդարացի և արագ կերպով գնահատելու, թե արդյոք փախստականները, տեղահանված անձինք և փախստականի վիճակում գտնվող անձինք բավարարում են բարձրագույն կրթություն ստանալու, հետագա բարձրագույն կրթական ծրագրերով ուսումը շարունակելու կամ զբաղվածության համար համապատասխան պահանջներին՝ անգամ այն դեպքերում, երբ Կողմերից մեկում ձեռք բերված որակավորումը չի կարող ապացուցվել փաստաթղթի միջոցով:

ԳԼՈՒԽ V I I I

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված VIII. 1

Յուրաքանչյուր Կողմ պետք է համապատասխան տեղեկատվություն տրամադրի իր բարձրագույն կրթական համակարգին պատկանող ցանկացած հաստատության և այդ հաստատությունների կողմից իրականացվող բոլոր ծրագրերի վերաբերյալ, որպեսզի հնարավորություն ընձեռի այլ Կողմերի լիազորված մարմիններին պարզելու, թե արդյոք այդ հաստատությունների կողմից տրվող որակավորումների մակարդակը հիմք է տալիս ճանաչման համար այն Կողմում, որտեղ այն հայցվում է: Այդպիսի տեղեկատվությունը տրամադրվում է հետևյալ ձևերով՝

ա. տեղեկատվություն գնահատման մեթոդների և արդյունքների, ինչպես նաև բարձրագույն կրթության որակավորումներ շնորհող բարձրագույն ուսումնական հաստատությունների և այդպիսի որակավորումներ ստանալուն ուղղված ծրագրերի ամեն մի տեսակին հատուկ որակի չափորոշիչների վերաբերյալ՝ այն դեպքերում, երբ Կողմերը ստեղծել են բարձրագույն ուսումնական հաստատությունների և ծրագրերի պաշտոնական գնահատման համակարգ:

բ. տեղեկատվություն իրենց բարձրագույն կրթական համակարգերին պատկանող բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ որևէ բարձրագույն կրթական ծրագրի շրջանակներում ձեռք բերված տարբեր որակավորումների ճանաչման վերաբերյալ՝ այն դեպքում, երբ Կողմերը չեն ստեղծել բարձրագույն ուսումնական հաստատությունների և ծրագրերի պաշտոնական գնահատման համակարգ:

Հոդված VIII. 2

Յուրաքանչյուր Կողմ պետք է համարժեք միջոցներ ձեռնարկի մշակելու,

պահպանելու և տարածելու համար՝

ա. իր բարձրագույն կրթական համակարգին պատկանող բարձրագույն ուսումնական հաստատությունների տարբեր տեսակների կարճ նկարագրությունը՝ յուրաքանչյուր տեսակի տիպային բնութագրերով հանդերձ,

բ. իր բարձրագույն կրթական համակարգին պատկանող ճանաչված հաստատությունների (պետական և մասնավոր) ցուցակը՝ նշելով տարբեր տեսակի որակավորումներ տալու նրանց իրավասությունները և յուրաքանչյուր տեսակի հաստատություն և ծրագիր ընդունվելու համար ներկայացվող պայմանները,

գ. բարձրագույն կրթական ծրագրերի նկարագրություն,

դ. իր տարածքից դուրս տեղակայված այն ուսումնական հաստատությունների ցուցակը, որպիսիք Կողմը համարում է իր կրթական համակարգին պատկանող հաստատություններ:

ԳԼՈՒԽ I X

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված IX. 1

Բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորման ճանաչումը հեշտացնելու նպատակով Կողմերը պարտավորվում են հիմնել թափանցիկ համակարգեր՝ ուղղված ձեռք բերված որակավորումների ամբողջական նկարագրությանը:

Հոդված IX. 2

1. Ընդունելով վերաբերելի, ճշգրիտ և արդիական տեղեկատվության անհրաժեշտությունը՝ յուրաքանչյուր Կողմ հիմնում կամ շահագործում է ազգային լրատվական կենտրոն և ծանուցում ավանդապահներից որևէ մեկին դրա հիմնադրման կամ դրա վրա ազդող փոփոխությունների մասին:

2. Յուրաքանչյուր Կողմի ազգային լրատվական կենտրոնը.

ա. հեշտացնում է իր գտնվելու վայրի պետության բարձրագույն կրթական համակարգի և որակավորումների մասին վստահելի և ճշգրիտ տեղեկատվության մատչելիությունը,

բ. հեշտացնում է այլ Կողմերի բարձրագույն կրթական համակարգերի և որակավորումների մասին տեղեկատվության մատչելիությունը,

գ. երաշխավորություն կամ տեղեկատվություն է տրամադրում ազգային

օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով օրենսդրության համաձայն որակավորումների ճանաչման և գնահատման հարցերի շուրջ:

3. Յուրաքանչյուր ազգային լրատվական կենտրոն իր տրամադրության տակ պետք է ունենա անհրաժեշտ միջոցներ, որոնք թույլ նրան թույլ կտան կտան իրականացնելու իր գործառույթները:

Հոդված IX. 3

Ազգային լրատվական կենտրոնների միջոցով կամ այլ կերպ Կողմերը պետք է նպաստեն Կողմերի բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ՅՈՒՆԵՍԿՕ/Եվրոպայի Խորհրդի վկայագրի միջուկի կամ որևէ այլ համարժեք փաստաթղթի օգտագործումը:

ԳԼՈՒԽ X

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հոդված X. 1

Հետևյալ մարմինները վերահսկում, խթանում և հեշտացնում են սույն Կոնվենցիայի իրականացումը.

ա. Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին Կոնվենցիայի կոմիտեն,

բ. գիտական ճանաչման և շարժունակության հարցերով Ազգային լրատվական կենտրոնների Եվրոպական ցանցը (ԵԱԼԿ ցանց)՝ ստեղծված Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 1994թ. հունիսի 9-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Եվրոպական տարածաշրջանային կոմիտեի 1994թ. հունիսի 18-ի որոշումների հիման վրա:

Հոդված X. 2

1. Սույնով հիմնադրվում է Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին Կոնվենցիայի կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե): Այն կազմված է յուրաքանչյուր Կողմի մեկական ներկայացուցչից:

2. X.2-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ «Կողմ» տերմինը Եվրոպական համայնքի նկատմամբ չի կիրառվում:

3. XI.1-ին հոդվածի 1-ին կետում հիշատակված պետությունները և Վատիկանը, եթե նրանք սույն Կոնվենցիայի Կողմ չեն, Եվրոպական համայնքը և ԵԱԼԿ ցանցի նախագահը կարող են մասնակցել Կոմիտեի նիստերին՝ դիտորդի

կարգավիճակով: Տարածաշրջանում ճանաչման հարցերով մասնագիտացած պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները նույնպես կարող են հրավիրվել մասնակցելու Կոմիտեի նիստերին՝ դիտորդի կարգավիճակով:

4. Եվրոպական տարածաշրջանին պատկանող պետությունների բարձրագույն կրթության դասընթացների, վկայագրերի և գիտական աստիճանների ճանաչման մասին Կոնվենցիայի կիրառման ՅՈՒՆԵՍԿՕ-ի Տարածաշրջանային կոմիտեի նախագահը նույնպես պետք է հրավիրվի մասնակցելու Կոմիտեի նիստերին՝ դիտորդի կարգավիճակով:

5. Կոմիտեն պետք է նպաստի սույն Կոնվենցիայի կիրառմանը և վերահսկի դրա կատարումը: Այս նպատակով նա կարող է Կողմերի մեծամասնությամբ ընդունել հանձնարարականներ, հռչակագրեր, արձանագրություններ, օրինակելի գործելակերպի մոդելներ՝ Կողմերի իրավասու մարմիններին՝ նրանց կողմից սույն Կոնվենցիան կատարելիս և բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման մասին դիմումները քննարկելիս ուղղություն տալու համար: Պարտավորված չլինելով այդ փաստաթղթերով, Կողմերը պետք է ամեն ինչ ձեռնարկեն՝ դրանք կիրառելու, իրավասու մարմինների ուշադրությունը դրանց վրա հրավիրելու և դրանց կիրառումը խրախուսելու նպատակով: Նախքան որոշում կայացնելը Կոմիտեն պետք է ստանա ԵԱԼԿ ցանցի կարծիքը:

6. Կոմիտեն հաշվետու է Եվրոպայի Խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան մարմիններին:

7. Կոմիտեն պետք է հարաբերություններ պահպանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո ընդունված՝ Բարձրագույն կրթության ոլորտում դասընթացների, վկայագրերի և գիտական աստիճանների ճանաչման կոնվենցիաների կիրառման՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարածաշրջանային կոմիտեի հետ:

8. Քվորումն առկա է Կողմերի մեծամասնության առկայության դեպքում:

9. Կոմիտեն ընդունում է իր Կանոնակարգը: Կոմիտեի հերթական նիստերը գումարվում են առնվազն երեք տարին մեկ անգամ: Կոմիտեի առաջին նիստը պետք է տեղի ունենա սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

10. Կոմիտեի քարտուղարությունը համատեղ վստահվում է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենին:

Հոդված X. 3

1. Յուրաքանչյուր Կողմ IX.2 հոդվածի համաձայն ստեղծված կամ շահագործվող Ազգային լրատվական կենտրոնին նշանակում է որպես գիտական ճանաչման և շարժունակության հարցերով Ազգային լրատվական կենտրոնների Եվրոպական (ԵԱԼԿ) ցանցի անդամ: Այն դեպքերում, երբ Կողմերից որևէ մեկում, IX.2 հոդվածի համաձայն, ստեղծվել կամ շահագործվում են մեկից ավելի Ազգային լրատվական

կենտրոններ, դրանք բոլորը Ցանցի անդամներ են, սակայն համապատասխան Ազգային լրատվական կենտրոններն ունեն միայն մեկ ձայնի իրավունք:

2. Իր կազմով սահմանափակված լինելով սույն Կոնվենցիայի Կողմերի Ազգային լրատվական կենտրոններով՝ ԵԱԼԿ ցանցը պետք է պաշտպանի և աջակցի իրավասու ազգային մարմինների կողմից սույն Կոնվենցիայի գործնական կատարումը: Ցանցի լիազումար նստաշրջանն հրավիրվում է առնվազն տարին մեկ անգամ: Այն ընտրում է նախագահ և բյուրո իր գործառույթներին համապատասխան:

3. ԵԱԼԿ ցանցի քարտուղարությունը վստահվում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենին:

4. ԵԱԼԿ ցանցի միջոցով Կողմերը պետք է համագործակցեն մյուս Կողմերի Ազգային լրատվական կենտրոնների հետ՝ հատկապես հնարավորություն տալով նրանց հավաքելու Ազգային լրատվական կենտրոնների՝ գիտական ճանաչման և շարժունակության հետ կապված գործունեության համար օգտակար ողջ տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ X I

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված XI. 1

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար՝

ա. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից,

բ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Եվրոպական տարածաշրջանի անդամ պետությունների կողմից,

գ. Եվրոպայի Խորհրդի Եվրոպական մշակութային Կոնվենցիայի և/կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Եվրոպական տարածաշրջանին պատկանող պետություններում բարձրագույն կրթության դասընթացների, դիպլոմների և գիտական աստիճանների ճանաչման՝ մասին Կոնվենցիայի յուրաքանչյուր այլ ստորագրող, պայմանավորվող կամ անդամ պետության կողմից,

որոնք հրավիրված էին՝ մասնակցելու սույն Կոնվենցիայի ընդունմանը լիազորված Դիվանագիտական խորհրդաժողովին:

2. Այդ Պետությունները և Վատիկանը կարող են պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունն արտահայտել.

ա. ստորագրությամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման վերաբերյալ վերապահումի, կամ

բ. ստորագրությամբ, որը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման, որին հետևում է վավերացումը, ընդունումը կամ հաստատումը, կամ

գ. միանալով:

3. Ստորագրումը կատարվում է ավանդապահներից որևէ մեկի մոտ: Վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագրերը ի պահ են տրվում ավանդապահներից որևէ մեկին:

Հոդված XI. 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Կոնվենցիոյով պարտավորված լինելու մասին հինգերորդ պետության կողմից իր համաձայնությունն արտահայտելու պահից հետո մեկամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից, ներառյալ՝ Եվրոպայի խորհրդի և/կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Եվրոպական տարածաշրջանի անդամ հանդիսացող առնվազն երեք պետություն: Ցանկացած այլ պետության համար այն ուժի մեջ է մտնում սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին այդ պետության կողմից իր համաձայնությունն արտահայտելու պահից հետո մեկամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված XI. 3

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած պետություն, որը չի մտնում XI.1-ին հոդվածում նշված որևէ կատեգորիայի մեջ, կարող է դիմում ներկայացնել սույն Կոնվենցիային միանալու խնդրանքով: Այս նպատակով ներկայացված բոլոր խնդրանքները պետք է հասցեագրվեն ավանդապահներից որևէ մեկին, որն դրանք փոխանցում է Կողմերին՝ Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորման ճանաչման Կոնվենցիայի Կոմիտեի նիստից առնվազն երեք ամիս առաջ: Ավանդապահը պետք է նաև տեղյակ պահի Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդին:

2. Սույն Կոնվենցիային միանալու մասին խնդրանքով դիմած պետությանը միանալու հրավեր հղելու մասին որոշումն ընդունվում է ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

3. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպական համայնքը կարող է միանալ դրան, հետևելով իր անդամ պետությունների կողմից ավանդապահներից որևէ մեկին ուղղված խնդրանքին: Այս դեպքում XI.3.2-րդ հոդվածը չի կիրառվում:

4. Միացող որևէ պետության կամ Եվրոպական համայնքի համար սույն

Կոնվենցիան ուժի մեջ է մտնում միանալու մասին վավերագիրը ավանդապահներից որևէ մեկին ի պահ հանձնելու պահից հետո մեկամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված XI. 4

1. Սույն Կոնվենցիայի անդամ հանդիսացող Կողմերը, որոնք միաժամանակ Կողմ են հանդիսանում հետևյալ Կոնվենցիաներից որևէ մեկին կամ մի քանիսին՝

- Համալսարաններ ընդունվելու հնարավորություն ընձեռող դիպլոմների համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան (1953, Եպշ, հ-15) և դրան կից Արձանագրությունը (1964, Եպշ, հ-49),

- Համալսարանական ուսումնառության ժամանակաշրջանների համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան (1956, Եպշ, հ-21),

- Համալսարանական որակավորումների գիտական ճանաչման մասին Եվրոպական կոնվենցիան (1959, Եպշ, հ-32),

- Միջերկրականին հարող արաբական և եվրոպական պետություններում բարձրագույն կրթության ոլորտում դասընթացների, դիպլոմների և գիտական աստիճանների ճանաչման միջազգային Կոնվենցիան (1976),

- Եվրոպական տարածաշրջանին պատկանող պետություններում բարձրագույն կրթության դասընթացների, վկայագրերի և գիտական աստիճանների ճանաչման մասին Կոնվենցիան (1979),

- Համալսարանական կրթության ժամանակաշրջանների ընդհանուր համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան (1990, Եպշ, հ-138),

ա. իրենց փոխադարձ հարաբերություններում պետք է կիրառեն սույն Կոնվենցիայի դրույթները.

բ. պետք է շարունակեն կիրառել վերոնշյալ Կոնվենցիաները, որոնց Կողմ են նրանք հանդիսանում, այդ Կոնվենցիաների կողմ այլ պետությունների հետ հարաբերություններում, որոնք, սակայն, սույն Կոնվենցիայի կողմ չեն:

2. Սույն Կոնվենցիայի Կողմերը պարտավորվում են ձեռնպահ մնալ 1-ին կետում նշված Կոնվենցիաներից որևէ մեկին Կողմ դառնալուց, որոնց իրենք դեռևս Կողմ չեն հանդիսանում, բացառությամբ Միջերկրականին հարող արաբական և եվրոպական պետություններում բարձրագույն կրթության ոլորտում դասընթացների, դիպլոմների և գիտական աստիճանների ճանաչման միջազգային Կոնվենցիայի:

Հոդված XI. 5

1. Յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Կոնվենցիան:

2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած հետագա պահի ավանդապահներից

մեկին ուղղված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի կամ տարածքների նկատմամբ: Նման տարածքի համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի հայտարարությունը ավանդապահի կողմից ստանալու օրվանից հետո մեկմսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետի հիման վրա արված ցանկացած հայտարարություն կարող է ավանդապահներից մեկին ուղղված ծանուցմամբ հետ վերցվել այդ հայտարարության մեջ նշված որևէ տարածքի առնչությամբ: Հետ վերցնելը ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցումը ավանդապահի կողմից ստանալու օրվանից հետո մեկմսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված XI. 6

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ցանկացած ժամանակ ավանդապահներից մեկին ուղղված ծանուցման միջոցով դադարեցնել իր անդամությունը սույն Կոնվենցիային:

2. Այդպիսի հայտարարությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը ավանդապահի կողմից ստանալու օրվանից հետո տասներկուամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը: Անդամությունը չեղյալ հայտարարելը, սակայն չի ազդում սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն ճանաչման վերաբերյալ նախօրոք ընդունված որոշումներին:

3. Սույն Կոնվենցիայի գործողության դադարեցումը կամ կասեցումը, որպես որևէ Կողմի կողմից այնպիսի դրույթի խախտման հետևանք, որն էական է սույն Կոնվենցիայի խնդիրների և նպատակների իրականացման համար, պետք է կատարվի միջազգային իրավունքի համաձայն:

Հոդված XI. 7

1. Յուրաքանչյուր պետություն, Վատիկանը կամ Եվրոպական համայնքը կարող են ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիրը ի պահ հանձնելիս հայտարարել, որ իրենց իրավունք են վերապահում մասամբ կամ ամբողջությամբ չկիրառել սույն Կոնվենցիայի հետևյալ հոդվածներից մեկը կամ մի քանիսը.

հոդված IV. 8

հոդված V. 3

հոդված VI. 3

հոդված VIII. 2

հոդված IX. 3

Որևէ այլ վերապահում արվել չի կարող:

2. Նախորդ կետի համաձայն վերապահում կատարած յուրաքանչյուր Կողմ կարող է ավանդապահներից որևէ մեկին հասցեագրված ծանուցման միջոցով հրաժարվել վերապահումից՝ մասնակիորեն կամ ամբողջությամբ: Այդպիսի հրաժարումն ուժի մեջ է մտնում նման ծանուցումը ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

3. Այն Կողմը, որը վերապահում է արել սույն Կոնվենցիայի որևէ դրույթի վերաբերյալ, չի կարող պահանջել այդ դրույթի կիրառումը որևէ այլ Կողմի կողմից: այնուամենայնիվ, նա կարող է պայմանական կամ մասնակի վերապահման դեպքում պահանջել այդ դրույթի կիրառումը այն չափով, որ չափով ինքն ընդունել է այն:

Հոդված XI. 8

1. Սույն Կոնվենցիայի փոփոխությունների նախագծերը կարող են ընդունվել Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության ոլորտում որակավորումների ճանաչման մասին Կոնվենցիայի Կոմիտեի կողմից՝ Կողմերի երկու երրորդի մեծամասնությամբ: Նման ընթացակարգով ընդունված ցանկացած փոփոխության նախագիծ ամրագրվում է սույն Կոնվենցիային կից համապատասխան Արձանագրությամբ: Արձանագրությունում նշվում են դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ կարգը, որով, ամեն դեպքում, պետք է պահանջվի սույն Կոնվենցիայով պարտավորված լինելու մասին Կողմերի համաձայնության արտահայտությունը:

2. Վերոնշյալ 1-ին կետով նախատեսված ընթացակարգի համաձայն՝ Կոնվենցիայի երրորդ բաժնում փոփոխություններ կատարվել չեն կարող:

3. Փոփոխության յուրաքանչյուր առաջարկ պետք է հաղորդվի ավանդապահներից որևէ մեկին, որի կողմից այն փոխանցվում է Կողմերին՝ Կոմիտեի նիստից առնվազն երեք ամիս առաջ: Ավանդապահը պետք է տեղյակ պահի նաև Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գործադիր խորհրդին:

Հոդված XI.9

1. Սույն Կոնվենցիայի ավանդապահներն են հանդիսանում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը և Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության Գլխավոր տնօրենը:

2. Այն ավանդապահը, որին ի պահ են տրվել փաստաթուղթը, ծանուցումը կամ հաղորդումը, պետք է սույն Կոնվենցիայի Կողմերին, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի և/կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի եվրոպական տարածաշրջանի այլ անդամ պետություններին ծանուցում է.

ա. յուրաքանչյուր ստորագրման մասին,

- բ. վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին վավերագիր ի պահ հանձնելու յուրաքանչյուր դեպքի մասին,
- գ. սույն Կոնվենցիան՝ XI.2 և XI.3.4 հոդվածների դրույթների համաձայն ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին,
- դ. XI.7 հոդվածի դրույթներին համաձայն արված յուրաքանչյուր վերապահման մասին և XI.7 հոդվածի դրույթներին համաձայն ցանկացած վերապահումից հրաժարվելու մասին;
- ե. XI.6 հոդվածի համաձայն սույն Կոնվենցիային անդամությունը չեղյալ հայտարարելու մասին,
- զ. II.1 հոդվածի կամ II.2 հոդվածի դրույթների համաձայն արված ցանկացած հայտարարության մասին,
- է. IV.5 հոդվածի դրույթների համաձայն արված ցանկացած հայտարարության մասին,
- ը. միանալու մասին XI.3 հոդվածի դրույթների համաձայն արված ցանկացած խնդրանքի մասին,
- թ. XI.8 հոդվածի դրույթներին համաձայն արված ցանկացած առաջարկության մասին,
- ժ. սույն Կոնվենցիային առնչվող յուրաքանչյուր այլ փաստաթղթի, ծանուցման կամ հաղորդման մասին:
3. Սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն հաղորդում ստացած կամ ծանուցում ուղարկված ավանդապահը այդ մասին անմիջապես տեղեկացնում է մյուս ավանդապահին:

Ի վկայություն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Լիսաբոնում, 1997թ. ապրիլի 11-ին 1983թ. մարտի 21-ին, անգլերեն, ֆրանսերենով, ռուսերեն և իսպաներեն լեզուներով, չորս տեքստ էլ՝ հավասարազոր, երկու օրինակով, որոնցից մեկն ի պահ է հանձնվում Եվրոպայի Խորհրդի արխիվին, իսկ մյուսը՝ Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության արխիվին: Հաստատված պատճենները պետք է ուղարկվեն XI.1-ին հոդվածում նշված բոլոր պետություններին, Վատիկանին, Եվրոպական համայնքին և Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությանը: